ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր, կեսօրից առաջ, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Ավստրալիայից և Միացյալ Նահանգներից ժամանած 80 հայ ուխտավորներ:

Հանուն ուխտավորների խմբի ելույթ է ունենում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Նյու Յորքի Տիկնանց հանձնաժողովի ատենապետ Լուսի Այլընը և կարդում հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տեր,

Անցնող տասնամյակներում, հետզհետե աճող թիվով մայր հայրենիք և Սուրբ Էջմիածին այցելող սփյուռքահայ խումբերում ոսկե շղթային վրա կավելնա մեր խումբը իբրև նոր օղակ մը: Մենք շատերը, որոնց մեջ նաև ես, առաջին անգամն է, որ կայցելենք Հայաստան:

Թեև մեզի տրված է երկու շաբաթներու ժամանակամիջոց մը, բայց մինչև այսօր մեր տեսածները և հառաջիկա օրերում մեր տեսնելիքները սքանչացում կպատճառեն մեզի: Մայր հայրենիքին մեջ, ամեն մարզի վրա, իրագործված նվաճումները գնահատել կարենալու համար, պետք է այցելել և սեփական աչքերով տեսնել այս բոլորը: Ասոնց մասին լսելը անբավարար է, և արդարություն չըներ իրականության:

Ամեն հայ որ կայցելե Հայաստան, նվիրական պարտականություն ունի այցելելու նաև մեր հոգևոր հայրենիքը՝ Սուրբ Էջմիածին: Առանց այդ այցելության շատ բան կպակսի դեպի Հայաստան կատարած մեր ուղևորությենեն: Հայ հավատքի կեդրոնը եղող այս սրբավայրին մեջ մեր տեսածները ոչ միայն կխանդավառեն մեզ, այլ կհամոզեն նաև որ Արարատի նայվածքին տակ հանգչող այս Հաստատությունը անխախտ պիտի մնա հայ ժողովուրդին հետ:

Վեհափառ Հայր, ես և ինձի պես շատեր, երկու առիթներով տեսած ենք Ձեզ, Ամերիկայի մեջ: Բայց Ձեզ իրապես գնահատելու համար, պետք է Ձեզ տեսնել Սուրբ Էջմիածնի մեջ և կենդանի աչքերով վկայել՝ Ձեր բազմակողմանի իրագործումները Սուրբ Էջմիածնի և Հայ Եկեղեցվո համար: Մենք սիրեցինք Ձեզի Ամերիկայի մեջ, բայց այս բոլորը տեսնելով, կհիանանք Ձեր վրա:

Վեհափառ Հայր, օրհնեցեք մեզի, և ամրապնդեցեք զմեզ մեր հավատքին մեջ»:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որին հրավիրված էին նաև հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Հավաքույթի ընթացքում «Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները» թեմայի շուրջ բովանդակալից դասախոսություն է կարդում Մատենադարանի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Սեն Արևշատյանը:

Վերջում հարգելի բանախոսը պատասխանում է ներկաների տված հարցերին:

*
* *

Հոկտեմբերի 2-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Վիեննա է մեկնում Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Աբել աբդ. Օղլուգյանը՝ տեղի աստվածաբանական ճեմարաններից մեկում իր ուսումը կատարելագործելու և միաժամանակ տեղի հայ համայնքին ծառայելու համար:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Յաւել ի մեզ Տէր ամենակալ զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան» աղոթքի բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ 1920 թ. Հաճընի հերոսամարտում զոհված հայ մարտիկների հիշատակին:

*
* *

Նույնը օրը Ս. Գայանե վանքի եկեղեցում տեղի է ունենում քահանայական ձեռնադրություն և օծում:

Ս. պատարագի ընթացքում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը քահանա է ձեռնադրում Ս. Գայանե վանքի տիրացու Սիմոն սրկ. Դարբինյանին՝ վերանվանելով նրան Տ. Հարությունն քահանա Դարբինյան:

Տ. Հարություն քահանան Մայր Աթոռում իր քառասունքը անցկացնելուց հետո, մեկնելու է Կիրովաբադ՝ տեղի հայոց եկեղեցում ծառայելու համար:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իրենց պաշտոնատեղին են մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց.

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ է մատուցում Տ. Ղևոնդ արքեպ. Չեբեյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Թարգմանչաց սերնդի կատարած եկեղեցական, մշակութային, ազգային անգնահատելի գործի հոգևոր նշանակության մասին:

*
* *

Նույն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

*
* *

Հոկտեմբերի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Չագալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակաց Ա 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կազմակերպվել էր հանդիպում ճանաչված բանաստեղծուհի Մարո Մարգարյանի հետ: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Երեկույթը ներածական խոսքով բաց է անում Վեհափառ Հայրապետը: Ապա հոգևոր ճեմարանի Բ լսարանի ուսանող Սըմբատ Արիստակեսյանը կարդում է Մարո Մարգարյանի մասին պատրաստած բովանդակալից իր ուսումնասիրությունը:

Գ դասարանի ուսանող Սամվել Դանիելյանն ընթերցում է բանաստեղծուհու մի քանի ստեղծագործություններ: Այնուհետև հրավիրվում է Մարո Մարգարյանը՝ իր խոսքն ասելու:

Հարգելի բանաստեղծուհին «բանաստեղծ և բանաստեղծություն» մտքերի շուրջ խոր-

հրդեհներ կատարելուց հետո, կարդում է մի շարք բանաստեղծություններ իր անտիպ ստեղծագործություններից:

*
* *

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Ստը՝ իր տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և մեծարգո պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Հոկտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբեղ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել» (Եսայի ԿԱ 1—2) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում պոլսահայերի մի խումբ:

Հանուն ուխտավորների խմբի Կարպիս Ուղուրյանն ընթերցում է հետևյալ ջերմ խոսքը.

«Վեհափառ Տեր,

Սիրա այսօր մեկ անգամ ևս փառք կուտանք Աստուծո, որ երջանկությունը կունենանք գտնվելու Սրբություն Սրբոց Սուրբ Էջմիածնի դարավոր կամարներուն ներքև:

Վեհափառ Տեր, Դուք մոտեն ճանչցած եք իսթամպուլահայությունը և տեղյակ՝ անոնց զգացումներուն հանդեպ Ս. Էջմիածնին և անոր արժանընտիր Գահակալին հանձին Ձերդ Սուրբ Օծության, Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսին:

Մեր այս ուխտավոր խումբին ալ սրտաբին փափագը և ուխտն էր ներկայանալու Ձեզի, Ձերդ Սուրբ Օծության Ս. Աջը առնելե վերջ, ստանալու նաև հայրապետական Ձեր օրհնությունները:

Մեր այս փոքրաթիվ խումբը լրիվ, Աստուծո կամքով հոգեպես պատրաստված է այսօր Ս. Էջմիածնի Մայր տաճարին մեջ խոստովանելե վերջ, անմահ ս. պատարագի ընթացքին հաղորդություն ստանալու Ձերդ Սուրբ Օծության բարձր ներկայության առջև, որմե վերջ պիտի մեկնինք թեթևացած և բավարարված, ուխտը լրիվ կատարած ուխտավորի մը գոհունակությունը մեր սրտերուն մեջ:

Այս պատեհ առիթով, Վեհափառ Տեր, մեր դարիվ և աստանդական հայու անզոր շրթներով Ձերդ Սուրբ Օծության կմաղթենք երկար և քաջառողջ տարիներ, որպեսզի արժանավորապես շարունակեք գլխավորել Ս. Լուսավորչի այս պատմական և կարևոր գահը և լավագույնս հովվել մեր բազմաչարչար հայ ժողովուրդը ամենուրեք»:

*
* *

Հոկտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 25-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում լիբանանահայ ծանոթ մտավորական պրոֆ. Բարունակ Թովմասյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

*
* *

Հոկտեմբերի 26-ին, կիրակի.—Տօն Գիւտ Խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կազմակերպված հավաքույթի ժամանակ, ելույթ է ունենում ճանաչված թարգմանիչ և գրող Կարպիս Սուրենյանը:

Հարգելի Սուրենյանը դասախոսություն է կարդում «Անձնավորություն, անձնավորության ինքնաճանաչում» թեմայի շուրջ՝ վերջում պատասխանելով ներկաների տված մի շարք հարցերին: